




ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ ԲՐՅՈՒՍԵԼԻ
ՌԱԴԻՈՅԻ ԵՎ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԱԾԽԱՏԱԿՑԻ ՀԵՏ
(Տպագրված բելգիական «Լա Լիբրը Բելժիկ»
թերթի մայիսի 14-ի համարում)

ՀԱՐՑ.— Հայ եկեղեցին, որը ինքնագլուխ մի եկեղեցի է և որի Ծայ-
րագույն Պատրիարքն է Ջերդ Սրբութունը, ծանոթ է Հայաստանյայց Առա-
քելական եկեղեցի անունով, որ ուրիշներ կոչում են նաև Գրիգորյան եկե-
ղեցի: Ի՞նչ կասեիք այս մասին, ո՞րն է ճիշտ անվանումը:

ՊԱՏ.— Ըստ ասորական ավանդության, Հայաստանում, որը անկախ
մի երկիր է եղել դեռևս 190 թվականին (մ. Ք.) և որի պաշտոնական կրոնն
է եղել Բազմաստվածությունը՝ մասամբ նման հունա-հռոմեական կրոնին,
Ավետարանը քարոզվել է առաջին դարում Ս. Թադեոս և Ս. Բարթողիմեոս
առաքյալների կողմից, որոնց քարոզության շնորհիվ այնտեղ կազմվել են
քրիստոնեական փոքր համայնքներ: Այստեղից էլ «Առաքելական եկեղեցի»
անվանումը: Այս երկու առաքյալների ճանապարհորդությունը Հայաստան
հիշատակված է «եբրայական ավետարաններ» կոչված գրքում, համաձայն
կաթոլիկ մի հեղինակի հաստատումների:

Հետագա դարերում այդ համայնքները հետզհետե անում ու բազմանում
են, հակառակ բազում հալածանքների: Գ. դարի վերջում Ս. Գրիգոր Լու-
սավորիչը Հայաստանում ձեռնամուխ է լինում քարոզչական եռանդուն աշ-
խատանքի: Տրդատ Գ թագավորը բանտարկել է տալիս նրան, ապա ազատ
արձակում և իր ամբողջ ընտանիքով ընդունում քրիստոնեական կրոնը: 301
թվականին մկրտվելուց անմիջապես հետո նա քրիստոնեությունը հայտա-
րարում է պետական կրոն, և Ս. Գրիգորը դառնում է քրիստոնյա առաջին
ծողովորդի առաջին եպիսկոպոսը: Ահա այս հանգամանքով է, որ նա հա-

մարվում է հիմնադիրը Հայ Եկեղեցու, որն այնուհետև կոչվում է Գրիգորյան կամ Լուսավորչական Եկեղեցի: Այսուհանդերձ սովորական և պաշտոնական անվանումը միշտ էլ եղել է ու մնում է՝ Հայ Առաքելական Եկեղեցի:

ՀԱՐՑ.— «Հին արևելյան» մյուս Եկեղեցիների հետ Հայ Առաքելական Եկեղեցին երբեք չի ընդունել Քաղկեդոնի ժողովի որոշումները: Այդ ժողովը 451 թվականին սահմանեց Քրիստոսի անձի միությունը երկու բնություններով՝ «կատարյալ մարդ և կատարյալ Աստված, անշփոթ, անխառն և անբաժանելի», այդպիսով դատապարտելով միաբնակության ուսմունքը, որը Քրիստոսի մեջ ընդունում է միայն «մեկ բնություն»: Հետևաբար ձեզ ընդհանրապես համարում են միաբնակներ: Սակայն իրականում ո՞րն է ձեր Եկեղեցու դավանությունը:

ՊԱՏ.— Մենք միաբնակներ չենք: Ծիշտ է, որ մենք մերժել ենք Քաղկեդոնի բանաձևերը, բայց նույնքան ճիշտ է, որ մենք դատապարտել ենք Եվտիքեսի միաբնակությունը և շարունակում ենք դատապարտել այն այնպիսի բանաձևերով, որ մենք կրկնում ենք եպիսկոպոսական ձեռնադրությունների ժամանակ:

506 թվականին գումարված Դվինի ազգային-եկեղեցական ժողովում էր, որ Հայ Եկեղեցին պաշտոնապես որոշում ընդունեց մերժելու Քաղկեդոնի ժողովի բանաձևերը և հաստատ մնալու Եփեսոսի տիեզերական ժողովի հավատո դավանության վրա, որը, որպես ուղղափառ դավանություն, ընդունված է բոլոր Եկեղեցիների կողմից, այդ թվում նաև հռոմեական կաթոլիկ Եկեղեցու: Եփեսոսի ժողովը նաև այն ժողովն էր, որը Ս. Մարիամին հայտարարեց «Աստվածամայր»: Ահա թե ինչու նրա պատկերը սովորաբար նկարվում է հայկական բոլոր եկեղեցիների գլխավոր խորանի վերևում:

ՀԱՐՑ.— Հին բանավեճեր, որոնք ծանր հետևանքներ ունեցան՝ հանգեցնելու համար ի վերջո բանաձևումների ճակատամարտի, այնպես չէ՞:

ՊԱՏ.— Դրանք, անշուշտ, ինչպես ասում են, Բյուզանդական վեճեր էին, որոնց պատճառներն ավելի շատ քաղաքական էին, քան կրոնական: Հարկավոր է, հետևաբար, ինչպես հաճախ, դիմել պատմությանը:

Մ. ԲԱՔԱՐԵ, հասկանալու համար հայերի հակազդեցությունը պետք է իմանալ, որ Քաղկեդոնի ժողովը հրավիրվեց 451 թվականին Բյուզանդիայի կայսեր կողմից այն ժամանակաշրջանում, երբ Հալաստանը, Բյուզանդիայից լքված, հարձակման էր ենթարկվել պարսիկների կողմից, որոնք ուզում էին քրիստոնյա ժողովրդին պարտադրել իրենց քաղաքական լուծը և մագդեզական կրոնը: Ծիշտ այդ թվականին էր, որ գորավար Վարդան Մամիկոնյանի (որին սրբացրել է մեր Եկեղեցին) այրումին ջախջախվեց պարսիկների կողմից Ավարայրի ճակատամարտում:

Ինչպես տեսնում եք, հայերը չէին կարող մասնակցել այդ ժողովին, ոչ իսկ իմանալ, թե ինչ էր տեղի ունենում Բյուզանդիայում, Հռոմում կամ Քաղկեդոնում: Եվ բնականաբար նրանք վերապահություն պիտի ցուցաբերեին ընդունելու հիշյալ ժողովի որոշումները, առավել ևս նրա համար, որ ուզում էին դրսևորել Բյուզանդիայի նկատմամբ քաղաքական անկախության իրենց ոգին:

ՀԱՐՑ.— Իսկ ի՞նչ եղավ շարունակությունը:

ՊԱՏ.— Ծարունակությունն այն եղավ, որ Հայաստանը երեսուն տարի մնաց պարսկական տիրապետության տակ, տեղի ունեցան բազում ազատագրական կռիվներ, նահատակվեց տվյալ ժամանակի կաթողիկոսը, և էկեղեցիները վերածվեցին զրադաշտական մեհյանների: Հարկավոր էր սպասել մինչև 484 թվականը, որպեսզի Հայաստանում քրիստոնեությունը վերագտներ իր ազատությունը և տեղեկանար ժողովի բանաձևերին: Մինչ այդ, սակայն, Քաղկեդոնի ուսմունքը, նույնիսկ Բյուզանդիայում, հակամարտությունների առարկա էր դարձել բազմաթիվ «կողմերի» միջև: Ոչինչ չէր հաստատվել վերջնականապես: Այն ժամանակ հայերը, որպես գործնական մարդիկ, փոխանակ միջամուխ լինելու այդ բանավեճերին, ուզեցին հավատարիմ մնալ Եփեսոսի ժողովի բանաձևերին, որոնք, ինչպես նշվեց, ճանաչվեցին որպես ուղղափառ բանաձևեր բոլոր Եկեղեցիների կողմից:

ՀԱՐՑ.— Ի՞նչ է մնում այսօր որպես վարդապետական տարբերություններ Հայ Եկեղեցու և Հռոմեական կաթոլիկ Եկեղեցու միջև:

ՊԱՏ.— Ծառ քիչ տարբերություն: Եվ ես համոզված եմ, որ լուրջ հիմքեր կան այսօր, որոնք թույլ կտային հաշտեցնել այդ տարբերությունները եղբայրական և էկումենիկ սիրո ոգով:

ՀԱՐՑ.— Վարդապետական երկխոսություններ տեղի ունեցել են Վատիկանի Բ ժողովից հետո:

ՊԱՏ.— Վարդապետական՝ դեռևս ոչ, բարեկամական՝ այո՛: Ինչպես նաև եղբայրական հարաբերություններ մյուս Եկեղեցիների հետ ևս: Մենք դիտորդներ ունեցանք Վատիկանի Բ ժողովում: Ավելի քան քսան տարուց ի վեր մեր Եկեղեցին մաս է կազմում Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդին և ունի իր մշտական ներկայացուցիչները նրա կենտրոնական կոմիտեում: Իմ առաջին այցելությունը Բեկդիա գուգադիայում է Վատիկան կատարած իմ առաջին այցելության և Պողոս Զ Պապի հետ իմ հանդիպման ուղիղ քսաներորդ տարեդարձին՝ 1970 թվականի մայիսի 8-ից 12-ը:

ՀԱՐՑ.— Ձեր Եկեղեցին ևս ունի՞ սինոդներ, եպիսկոպոսաց ժողովներ, բարեկործանման, բարեփոխություններ: Բարեփոխություն, օրինակ, եկեղեցում աշխարհականների դերի վերաբերյալ:

ՊԱՏ.— Եպիսկոպոսաց մեր վերջին ժողովը տեղի է ունեցել շուրջ քսան տարի առաջ և սահմանափակվել է միայն կարգավորելով մի քանի գործնական հարցեր: Դրան հակառակ, կարող եմ հաստատել, որ Հայ Եկեղեցում աշխարհականների տեղը դեռ վաղուց եղել է նույնքան (եթե ոչ ավելի) կարևոր, որքան կաթոլիկ և օրթոդոքս Եկեղեցիներում է այսօր:

ՀԱՐՑ.— Օրինակ...

ՊԱՏ.— Կաթողիկոսը՝ ամբողջ հայ ազգի գերագույն հոգևոր պետը, ընտրվում է ցկյանս պատգամավորների մի ժողովի կողմից, որի մեկ եր-

րորդը բաղկացած է լինում հոգևորականներից, իսկ երկու երրորդը՝ աշխարհականներից և որի մեջ ընդգրկվում են ներկայացուցիչներ թե՛ Հայաստանի Սոցիալիստական Հանրապետությունից և թե՛ սփյուռքի հայկական տարբեր համայնքներից: Ինչ վերաբերում է եպիսկոպոսների նշանակմանը, կաթողիկոսը չէ, որ նշանակում է նրանց, այլ նա հաստատում է թեմական ժողովների կողմից կատարված տեղական ընտրությունները, որտեղ ընտրողների մեծ մասը աշխարհականներ են լինում:

ՀԱՐՑ.— Ձեր Եկեղեցում ընդունված է միջ-հարանվանական հաղորդությունը:

ՊԱՏ.— Այդ մասին մենք որևէ կանոն չունենք, ոչ էլ եկեղեցական արգելք: Միջ-հարանվանական հաղորդությունը ինքնաբերական է, կախված է հավատացյալի համոզումից:

ՀԱՐՑ.— Հայ Եկեղեցու Ծայրագույն Պատրիարքը նույն իշխանությամբ է օժտված, ինչպես Հռոմի Պապը կամ Կ. Պոլսի Տիեզերական Պատրիարքը:

ՊԱՏ.— Կանոնական տեսակետից Ամենայն Հայոց Կաթողիկոսը գերագույն պետն է Հայ Եկեղեցու: Սակայն Երուսաղեմի, Անթիլիասի և Կ. Պոլսի մեր մյուս պատրիարքությունները ունեն տեղական իշխանություն, որ նրանք ի գործ են դնում՝ լիակատար հաղորդության մեջ լինելով Մեզ հետ: Մենք մի տեսակ առաջինն ենք հավասարների մեջ: Բացի այդ, մեզ մոտ ամեն ինչ կազմակերպված է՝ համաձայն ապակենտրոնացված մի համակարգի:

ՀԱՐՑ.— Ի՞նչ պատգամ կցանկանար տալ Ձերո՞ր Սրբությունը Բելգիայի բոլոր քրիստոնյաներին:

ՊԱՏ.— Մենք նրանց հղում ենք մեր լավագույն մաղթանքներն ու սիրո հավաստիքը՝ Մեր աղոթքն առաքելով առ Աստված՝ օգնելու մեզ, որ քրիստոնեական բոլոր Եկեղեցիները միանան իրենց ջանքերի մեջ, որպեսզի այսօրվա մեր խռովահույզ աշխարհում կարողանանք գտնել ազատության, արդարության և եղբայրության ուղիղ ճանապարհը և որպեսզի Քրիստոսի Եկեղեցին ի հայտ գա որպես ստեղծարար մի ուժ՝ ընդունակ լուծելու մեր ժամանակաշրջանը հուզող բոլոր հարցերը:

